ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի ապրիլի 3-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ (Մեծամոր)՝ գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Գործուղվողը

Արմեն Մանուկյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներդրումային ծրագրերի համակարգման, տնտեսագիտական վերլուծության և մոնիթորինգի վարչության պետ:

3. Գործուղման վայրը և ժամկետները

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի ապրիլի 3-ի թիվ 606-Ա հրամանի համաձայն՝ 2025 թվականի ապրիլի 3-ին գործուղվել եմ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ (Մեծամոր):

4. Գործուղման նպատակը

Մասնակցել եմ Հայկական ատոմային էլեկտրակայանի N 2 էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման և կրկնակի երկարաձգման ծրագրերի շրջանակներում կազմակերպվող քննարկմանը:

5. Քննարկված թեմաները

Քննարկվել են Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարաձգում և արդիականացում և Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի կրկնակի երկարաձգում և արդիականացում ծրագրերի շրջանակներում իրականացվող աշխատանքների, կատարվող ժամկետների և վճարումների վերաբերյալ խնդիրները:

6. Բարձրացված կամ քննարկված հարցերը

Քննարկվել են ՀՀ 2025թ. պետական բյուջեով նախատեսված 1167 Էլեկտրաէներգետիկ համակարգի զարգացման ծրագրի «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ին տրամադրվող բյուջետային վարկ» 42009 միջոցառման (այսուհետ՝ ՇԺԵ-1) և «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման նախագծային

ժամկետի կրկնակի երկարաձգում» 42012 միջոցառման (այսուհետ՝ ՇԺԵ-2) շրջանակներում իրականացվող աշխատանքների, դրանց կատարման ժամկետների և վճարումների, ՇԺԵ-1 իրականացման աշխատանքների ֆինանսավորման նպատակով ՀՀ կառավարության 11.06.2020թ. № 953-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) համաձայն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) 2020-2025թթ. ընթացքում ՀՀ պետական բյուջեից տրամադրվող 63,2 մլրդ դրամ գումարի չափով բյուջետային վարկի՝ 2025թ. ընթացքում հատկացվելիք և մնացորդային միջոցների սահմանված կարգով օգտագործման, ինչպես նաև Որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին հարցերը: Բացի այդ քննարկվել են ՇԺԵ-2 շրջանակներում 2025թ. նախատեսված բյուջեի կատարման, վերաբաշխման և ՀՀ 2026-2028թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և ՀՀ 2026թ. պետական բյուջեի բյուջետային ֆինանսավորման հայտերի, ինչպես նաև Ընկերության ՇԺԵ-2 ծրագրով նախատեսված միջոցառումների կազմակերպման և կատարման պլանը հաստատելու մասին ՀՀ կառավարության 14.09.2023թ. № 1597-Ա որոշման վերանայման հարցերը:

Առաջարկվել է Ընկերությանը մեկ անգամ ևս քննարկել ՇԺԵ-1 և ՇԺԵ-2 ծրագրերի շրջանակներում նախատեսված աշխատանքների գնումների պլանը և սահմանված կարգով ներկայացնել ՀՀ կառավարության որոշման համապատասխան նախագծեր:

7. Ստորագրությունը, ամսաթիվը

04/04/2025թ.